ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՏԻՊԻ ԱՆՁԻ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աննա Առաքելյան
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու

Հոդվածում ներկայացված են 2-րդ կուրսի ուսանողների հետ իրականացրած գիտափորձի արդյունքները: Հոդվածում ներկայացված են հիմնական պահանջմունքների և անձի ցուցադրական տիպի համահարաբերակցման արդյունքները, վերլուծված են փոխհարաբերության դրսևորման առանձնահատկությունները: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ փոխհարաբերության դրսևորման առանձնահատկություններում որոշիչ դեր ունեն նաև մասնագիտության բնութագրերը:

Հիմնաբառեր. հիմնական պահանջմունքներ, ցուցադրական տիպ, պահանջմունքների և անձնային հատկությունների համահարաբերակցություն, բնավորության շեշտվածություն:

Անձնային հատկությունների և հիմնական պահանջմունքների համահարաբերակցման առանձնահատկությունների համակարգային հետազոտության շրջանակում մեր կողմից ուսումնասիրվել է նաև շեշտված անձանց պահանջմունքային համակարգի դրսևորման առանձնահատկությունները:

Բնավորության գծերի աննրդաշնակ զարգացման խնդիրը խորքայնությամբ ուսումնասիրվել է Կ. Լեոնհարդի և Ա. Լիչկոյի կողմից: Գերմանացի հոգեբան, հոգեբույժ Կ. Լեոնհարդի կողմից է ներմուծվել «բնավորության շեշտվածություն» հասկացությունը: Շեշտվածությունը պաթոլոգիա չէ, այլ համարվում է նորմայի ծայրահեղ դրսևորում, որոնց ժամանակ բնավորու-

թյան առանձին գծեր չափազանց ընդգծված են: Վերջինս պայմանավորում է որոշակի ազդեցությունների նկատմամբ անձի բարձր խոցելիություն, հանդես գալիս սոցիալական ադապտացիայի խաթարման գործոններից մեկը: Կ. Լեոնհարդը տվել է շեշտված անձանց տիպերի դասակարգում և նկարագրություն, իսկ Լիչկոն, ուսումնասիրելով բնավորության շեշտվածությունների առաջացման պատճառներն ու պայմանները, նկարագրել է դեռահասների բնավորության շեշտվածության 11 տիպեր:

Հետազոտության խնդիրներից է եղել բացահայտել անվտանգության, սոցիալական, ընդունված լինելու և ինքնադրսևորման պահանջմունքների դրսևորման առանձնահատկությունները բնավորության շեշտվածության ցուցադրական տիպի մոտ: Ցուցադրական տիպի մարդն աչքի է ընկնում վարքի ցուցադրականությամբ, շարժունությամբ, շփումներ հաստատելու հեշտությամբ: Հակված է ֆանտազիաների, կեղծավորության և ստախոսության՝ ուղղված իր անձի գերերանգավորմանը, դերասանականությանը: Այս տիպի մոտ արտահայտված է լիդերության ձգտումը, իշխանության ծարավը, եսակենտրոնությունը, ընդունման, գովասանքի արժանանալու արտահայտված պահանջմունքը, հիացմունքի, հուզակցման, զարմանքի ծարավը: Ընկերության ձգտումը սովորաբար կապված է իրեն լիդեր զգալու, բացառիկ դիրք գրավելու հետ: Երբեմն կարող է նյարդայնացնել իր ինքնավստահությամբ և բարձր հավակնություններով: Պարբերաբար հրահրում է կոնֆլիկտներ: Կարող է ուրիշների ուշադրությունը գրավել մտածողության և արարքների արտասովորությամբ[1]:

Հետազոտության ընտրակազմում ընգրկված են եղել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 2-րդ կուրսի 139 ուսանողներ: Օգտագործել ենք Լեոնհարդ-Շմիշեկի հարցարանը[2], որը նախատեսված է շեշտված անձանց 10 տիպերի (ցուցադրական, խրվող, մանրախնդիր, դյուրագրգիռ, հիպերտիմ, դիստիմիկ, տագնապային, էկզալտիվ, հուզական, ցիկլոտոմ) արտահայտվածության մակարդակի ախտորոշման համար: Տվյալների վերլուծության արդյունքում 15-19 միավորի դեպքում ախտորոշվում է բնավորության տվյալ տիպի շեշտվածության միտում, իսկ 19-24 միավորի դեպքում բնավորության գիծը համարվում է շեշտված: Պահանջմունքային համակարգի ուսումնասիրության նպատակով օգտագործել ենք «Հիմնային պահանջմունքների բավարարվածության աստիճանի ախտորոշման մեթոդիկան»[3]: Պահանջմունքների և բնավորության ցուցադրական տիպի փոխհարաբերության առանձնահատկությունները բացահայտելու նպատակով կիրառել է Սպիրմենի կարգային համահարաբերակցության տեխնիկան: Հետազոտական ընտրակազմի յուրաքանչյուր խմբում շեշտված տիպերի և պահանջմունքների համահարաբերակցման արդյունքում առանձնացվել են նշանակալի

1 Տես Смирнов А. Г. Практикум по общей психологии.М: Изд-во Института психотерапии, 2005, էջ 174-175:

2 Տես Смирнов А. Г. Практикум по общей психологии.М: Изд-во Института психотерапии, 2005, էջ 169-178:

3 Տես Столяренко Л. Д. Основы психологии. Практикум, Ростов н/Д, Феникс, 2006, էջ 421-423:

ցուցանիշները՝ հաշվի առնելով թույլատրելի սխալների տարբեր հավանականությունների համար հարաբերակցության գործակիցների ծայրագույն նշանակությունները[4]:

Փորձարարական բոլոր խմբերում ցուցադրական տիպի և մարդկանց հետ ջերմ հարաբերություններ հաստատելու ցանկության միջև արտահայտված բացասական կապերը վկայում են, որ մարդկանց հետ ջերմ հարաբերություններ հաստատելու ցանկության դրսևորման մակարդակը պայմանավորվում է նաև ցուցադրականության արտահայտվածության մակարդակով: Ցուցադրականության շեշտվածության պարագայում մարդկանց հետ ջերմ հարաբերություններ հաստատելու ցանկությունը վարքի մոտիվացիայում ակտուալ չէ:

Ենթադրվում էր, որ դրական նշանակալի հարաբերակցություն պիտի արտահայտվեր ցուցադրական տիպի և ճանաչման, հարգանքի հասնելու ձգտման միջև: Ընդունված է համարել, որ ճանաչված լինելու ձգտումը ցուցադրական տիպին բնորոշ դրդապատճառներից մեկն է, հենց վերջինում է կայանում ցուցադրական տիպի բնութագրական առանձնահատկությունը[5]: Սակայն փորձարարական ոչ մի խմբում նշանակալի հարաբերակցություն չի բացահայտվել: Սա կարելի է բացատրվել այն հանգամանքով, որ մարդկանց վարքի դրդապատճառների հիմքում ընկած ճանաչված և ընդունված լինելու ձգտումը ենթակա է նշանակալի անհատական տատանումների:

Հարաբերակցային կապերի վերլուծությունը թույլ է տվել նկատել, որ մասնագիտության բնութագրերը որոշակիորեն արտահայտվել են ցուցադրական տիպերի ընդունված լինելու, ինքնադրսևորման պահանջմունքների առանձնահատկություններում: Օտար լեզուների խմբում ցուցադրական տիպի և ազդեցիկության կարգավիճակ ունենալու ցանկության միջև արտահայտված դրական կապը ($r=0.366$, երբ $p\leq0.01$), թույլ է տալիս ենթադրել, որ ազդեցիկության կարգավիճակ ունենալու ցանկության դրսևորման մակարդակը պայմանավորված է նաև ցուցադրական տիպի գծերի արտահայտվածության մակարդակով: Հավանաբար սա է պատճառը, որ այս խմբում համանման դրական կապ է բացահայտվել ցուցադրական տիպի և անվտանգության պահանջմունքների խումբը ներկայացնող դիրքն ամրապնդելու ցանկության միջև ($r=0.283$, երբ $p\leq0.05$): Քանի որ այս մասնագիտության մեջ գործունեության բնույթը կապված է հաղորդակցման գործընթացի, լեզվական ընդունակությունների դրսևորման հետ, ապա ցուցադրականության շեշտվածության դեպքում ցայտուն արտահայտվում է հաղորդակցման ներգործման գործառույթը, խոսքի կամք արտահայտող կողմը, որպեսզի լսողը ենթարկվի խոսողի մտադրությանը: Վերջինս ցուցադրական գծերի ընդգծվածության պարագայում պայմանավորում է այս պահանջմունքի դրսևորման ակտուալ մակարդակը, քանի որ այս դեպքում մեծանում է հանգամանքների, այլ մարդկանց վրա ազդեցության հնարավորությունը:

4 Տես Немов Р.С. Психология кн.3.: Психодиагностика. М. Изд. Центр ВЛАДОС, 2007, էջ 581:

5 Տես Психология и психоанализ характера. Хрестоматия по психологии и типологии характеров.– Самара: Издательский Дом Бахрах-М, 2007, էջ 375:

Ցուցադրական տիպի և դիրքն ամրապնդելու ցանկության միջև արտահայտված կապը կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ դիրք զբաղեցնելն ինքնահիրացման, ընդունակությունների դրսևորման հնարավորություն է տալիս: Այս դեպքում սոցիալական դիրքի բարձրացումն ընկալվում է ոչ միայն որպես անվտանգության երաշխիք, այլև լիազորությունների աղբյուր, որը գերակայություն ունենալու, այլ մարդկանց կողմից ընդունված լինելու հնարավորություն կտա: Ամենայն հավանականությամբ, անվտանգության պահանջմունքի նման դրսևորումն իր մեջ կրում է նաև ճանաչված և ընդունված լինելու պահանջմունքի բաղադրիչներ՝ դառնալով ավելի բարդ պահանջմունք: Մաթեմատիկայի բաժնի ուսանողների մոտ դրական կապ է արտահայտվել այս տիպի և վարպետության, կոմպետենտության մակարդակի բարձրացման ցանկության միջև ($r=0.409$, երբ $p\leq0.05$): Ցուցադրականության շեշտվածությունն այս դեպքում պայմանավորել է ընդունված լինելու պահանջմունքային խմբում վարպետության, կոմպետենտության մակարդակը բարձրացնելու ցանկությունը, որովհետև մաթեմատիկներին բնութագրական է գործունեության մեջ ընկղմվելու և նվիրում պահանջող գործով զբաղվելու ձգտումը: Այն կարող է ուղղված լինել ցուցադրական տիպի՝ տպավորություն գործելու, ուշադրություն գրավելու, անկրկնելի և յուրատիպ երևալու ձգտումների իրացմանը: Պետք է ենթադրել, որ մաթեմատիկական ընդունակությունների զարգացման և մասնագիտական ուղղվածության բարձր մակարդակի պարագայում իմացական մոտիվացիայում առանցքային դեր ունի վարպետության, կոմպետենտության մակարդակի բարձրացման ցանկությունը: Երաժիշտների խմբում գրանցված համահարաբերակցման ցուցանիշը ցույց է տալիս, որ նորին, անհայտին ձգտման դրսևորման մակարդակը պայմանավորված է նաև ցուցադրականության արտահայտվածության մակարդակով ($r=0.347$, երբ $p\leq0,05$): Մասնագիտական այս 2 խմբերում նույն բովանդակությունն արտահայտող ցուցանիշների դրսևորումը պայմանավորվել է նաև այն հանգամանքով, որ երաժշտական և մաթեմատիկական ընդունակությունների ցուցանիշները գրեթե նույն են, գործունեության այս 2 տեսակներն էլ մանրակրկիտ տարրերի ներդաշնակության վրա են կառուցվում, մի դեպքում թվային հարաբերություններ են, մյուսում՝ չափային: Պետք է ենթադրել, որ վերջինս, արտահայտելով մասնագիտական գործունեության մեջ ընկղմվածության բարձր մակարդակը, որոշիչ է նաև իմացական մոտիվացիայի ձևավորման գործընթացում: Այս դեպքում իմացական և ընդունված, ճանաչված լինելու մոտիվացիաները կարծես թե միահյուսվում են: Արդյունքները վկայում են, որ ցուցադրականության շեշտվածության դեպքում իմացական մոտիվացիան, գործունեության ուղղվածության և արդյունավետության ցուցանիշ լինելով, ուղղված է նաև անձի ճանաչված լինելու պահանջմունքի բավարարմանը:

Հետազոտական ընտրանիներում ցուցադրական տիպի և ճանաչված, ընդունված լինելու ցանկության տարբեր դրսևորումների միջև արտա-

հայտված կապերը վկայում են, որ այս տիպի սահմաններում ևս վարքի մոտիվացիաների տարբերություններ կան: Ցուցադրական տիպի որոշ անձինք իսկապես ձգտում են միայն ճանաչման ձեռքբերման, բայց վարքի մոտիվացիայում կարող են առանցքային լինել տարբեր ցանկություններ: Հավանաբար այս դեպքում արտահայտվել է նաև այն հանգամանքը, որ ցուցադրական տիպի անձինք հաճախ իրենցից գոհ են լինում առանց նկատելի պատճառների՝ ցուցադրելով հեղինակություն, որին օբյեկտիվորեն ամենևին էլ չեն տիրապետում:

Այսինքն՝ հիստերոիդների վարքում ընդհանուր առմամբ ճանաչված և ընդունված լինելու պահանջմունքն արտահայտվածության մակարդակով այնպիսին է, ինչպես մարդկանց մեծամասնության մոտ, պարզապես այդպիսի տպավորություն է ստեղծվում: Շատ հաճախ հիստերոիդների հենց ուշադրության կենտրոնում գտնվելու պահանջմունքն է ընդունվում որպես ճանաչված լինելու ծարավ [6]:

Արդյունքների համադրումից պարզ է դառնում, որ

1. Ցուցադրական տիպի մոտ սոցիալական պահանջմունքները թույլ արտահայտվածություն ունեն, գտնվում են բավարարվածության գոտում: Այս խումբը ներկայացնող պահանջմունքների հետ հիմնականում բացասական կապեր են արտահայտվել:
2. Շեշտվածության տիպի առանձնահատկություններով պայմանավորված՝ պահանջմունքային բաղադրիչները դրդապատճառային համակարգում այլ նշանակություն են ստանում:
3. Ցուցադրական տիպի և պահանջմունքային համակարգի տարբեր բաղադրիչների համահարաբերակցության դրսևորումները պայմանավորվում են ինչպես տվյալ փորձարարական խմբի առանձնահատկություններով, այնպես էլ մասնագիտության բնութագրերով:
4. Պահանջմունքային խմբերի տարբեր բաղադրիչների և հատկությունների միջև արձանագրված նշանակալի կապերի ռանգավորման ուսումնասիրությունից պարզվել է, որ գործունեության մեջ և միջանձնային հարաբերություններում պահանջմունքային հիմնական խմբերի տարբեր բաղադրիչների դրսևորման մեխանիզմներում առավել կարևորվող հատկություններից մեկը ցուցադրականությունն է:

6 Տես Психология и психоанализ характера. Хрестоматия по психологии и типологии характеров.– Самара: Издательский Дом Бахрах-М, 2007. էջ 376:

ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ПОТРЕБНОСТЕЙ ЛИЧНОСТИ ДЕМОНСТРАТИВНОГО ТИПА

Анна Аракелян
Преподаватель Армянского Государственного педагогического университета имени Х. Абовяна и Международного университета Евразия, кандидат психологических наук

В статье представлены результаты экспериментов со студентами 2-ого курса. В статье представлены результаты корреляции основных потребностей и акцентуации личности демонстративного типа, проанализированы особенности проявления взаимоотношений. Результаты исследования показывали, что в проявлении особенностей взаимоотношений определенную роль играют профессиональные характеристики.

Ключевые слова: основные потребности, демонстративный тип, корреляция потребностей и личностных свойств, акцентуация характера.

THE PECULIARITIES OF NEEDS MANIFESTATION OF THE DEMONSTRATIVE PERSON

Anna Araqelyan
Lecturer at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan and Eurasia International University, Ph.D. in Psychology

The article presents the results of an experiment conducted with the students of the 2nd year. The article presents the correlation results of basic needs and demonstration type of personality; peculiarities of relationship demonstration are analyzed. The experiment results have shown that the profession characteristics also play a decisive role in the peculiarities of relationship demonstration.

Key words: basic needs, demonstrative type, correlation of needs and personal features, the emphasis of the character.